

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

Թե՛հրանի կայսրանի կառավարման տակ շատ քանակությամբ հայերի մի հոծ բազմություն դեպի հայրենիք էր ճանապարհում իր առաջին փորձիկ քարավանը, որ բազկացած էր մի խումբ երիտասարդ տղաներից ու ազգիկներից, որոնք օր առօրե մեկնում էին Երևան՝ բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու և այնտեղ սպասելու հաջորդ քարավաններին, որոնցով գալու են իրենց հարազատները:

Ճեղքի էր պահել Մեծահասակ ուրախություն արդուներն ու ընտանիքները, զանազան խորհուրդներ էին տալիս իրենց զավակներին, իսկ ուղեկցողները սեղմելով մեկնող երիտասարդների ձեռքը, պատվիրում էին նրանց իրենց անգամ էլ համարում էր մայր Հայաստանի սրբազան հողն ու հայտնել նրան, որ շուտով իրենք էլ կվերադառնան նրա հարազատ գիրկը:

Վերջապես գնացրո պոկվեց անգիր իր հետ տանելով ուղեկցողների կատարած հայացքներն ու մաղթանքի ջերմ խոսքերը:

Սուրում էր գնացրո Իրանի գորշ դաշտերով: Երիտասարդների հայացքի հանգեպ նախ էին գնում դաշտերը, լեռները, երկինքը, նա էր գրելու օտար աշխարհը, ուր նրանք թողել էին իրենց անուրախ մանկությունը: Նրանց միտքը գնացրոց առաջ սուրալով արդեն քանի-քանի անգամ հասել էր հայրենի երկիրը, սիրելի Երևանը, որը նրանք չէին տեսել երբեք, բայց այնքան երազել ու կարոտել էին և որի հետ կապել իրենց բախտն ու ապագան:

Վերջապես ահա սահմանագիծը, որ

բաժանում է իրարից երկու հակադիր աշխարհ, որոնցից մեկում հայ ժողովուրդը պանդուխտի այրող կարոտը սրտում տքնում է, աշխատում, մաքրում, բայց ոչ իր, այլ օտարի համար: Իսկ մյուսում, սովետական ջերմ արևի տակ, վերականգնելով գարեջուլ կորցրած իր պետականությունը, հայ ժողովուրդը կերտում է իր հույսկապ հայրենիքը, իր ջրեղ ուստանները, իր լուսավոր ապագան: Երիտասարդների սիրտը թրթռում է անսովոր մի զգացման քիչ, որի մեջ ի մի են ձուլվել կարոտը, խնդրությունը, երախտագիտությունը:

— Ողջունք թե՛, սովետական հող, ողջունք թե՛, հայրենի երկիր: Շուտով հեռու մշուշի մեջ նրանց հայացքի առջև երևաց Արարատը սպիտակափառ ճակատը սուղած կապույտ երկնքում: Նրանք շատ էին տեսել այս լեռը եկարներում, շատ էին պատկերացրել նրան իրենց երազներում և ահա կանգնած է նա իրական, բայց ավելի վսեմ, ավելի փառահեղ, քան նրանք տեսել էին եկարներում և քան իրենց երևակայությունը ու էր ունեցել ստեղծելու:

Սուրում է գնացրո կանաչազարդ այգիների միջով, գյուղերի միջով, որոնք շրջապատված են խաղողի բարեբեր այգիներով ու սրացիկ բարդիներով: Սջախներից խաղաղ բարձրանում է ձուլուն ու ցնդում երկնքի կապույտի մեջ: Երիտասարդներից մեկը՝ ճրայր մոզսիսյանը, որ նկարիչ է և գնում է Երևան կերպարվեստի ինստիտուտն

ընդունվելու, շրջվում է դեպի ընկերներն ու շնչում:

— Ես կնկարեմ այս կախարդական տեսարանները, այս կանաչ բարդիները, այս մրգառատ այգեստաններն ու վեհափառ Մոսխուր: Վերջապես հևասպառ գնացրո սուրալով մտածում և կանգ է առնում Երևան կայսրանում: Նրանք ոտք են գնում հայրենի հողին: Զերմ ու սիրագործվ հանգիստումներ, ողջունքի հուշի խոսքեր: Ավտոմեքենայով նրանք սլանում են քաղաք: Նրանց տեղավորում են Պետական համալսարանի հանրակացարանում: Ողջ օրը նրանք շրջում են քաղաքի փողոցներում և նրանց հայացքի առջև բարձրանում են մեկը մյուսից գեղեցիկ և հույսկապ ջերմերը՝ զարդարված հայկական ոճի մանրաքանդակներով, խոտակներով ու կամարներով: Ամենուրեք հեշում է մայրենի սիրելի բարբառը: Նրանց սիրտը հպարտության զգացումով է լցվում: Այդ ամենը իրենցն է, իրենց սեփականությունը, իրենց հայրենիքը:

Հաջորդ օրը նրանցից յուրաքանչյուրը գնում է իր ընտրած ուսումնական հաստատությունը՝ ընդունելությունը դիմումներ ներկայացնելու է: Մանուկյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Ավագյանը, Զ. Ծգանյանը գնում են Պետական համալսարան, առաջին 3-ը՝ ֆիզիոլոգիական, իսկ վերջինը՝ պատմության ֆակուլտետը: Ընդունվելու է: Բաղայանը, Վ. Ջախարայանը, Ս. Ղազարյանը գնում են երաժշտական դպրոց, առաջինը՝ փո-

կայ, երկրորդը՝ գաղնամուրի, իսկ երրորդը՝ Թավրուշյանի բաժնում ընդունվելու է: Առաջինը, Մ. Բարսեղյանը գնում են Իժնկյան ինքն-տիտուտ, իսկ Զ. Մոզսիսյանը՝ Գերպարվեստի: Ամենուրեք ջերմ սիրտով ու գրկարաց են ընդունում: Նրանց նրանք հուզմունքից դողացող ձեռքերով հանձնում են իրենց գիմումները, որոնց մեջ ջերմ խոսքեր են գրել իրենց ցանկությունների մասին: Ուսանողները շրջապատում են նրանց, ջերմորեն գրուցում նրանց հետ, ծանոթացնում համալսարանի պայմաններին: Նորեկները պատմում են, թե ինչպես իրենք իրանում ավարտելով տարրական կրթությունը, այլևս հրեարավորություն չեն ունեցել մայրենի լեզվով սովորելու և ստիպված սովորել են պարսկերեն: Բայց նրանք երբեք չեն մոռացել իրենց մայրենի բարբառը: Կարողացել են ճայաստանից ստացվող գրքերն ու լրագրերը, ինքնուսուցմամբ սիրապետել հայերենին, հավատալով, որ կգային երջանիկ օրը, երբ նրանք կվերադառնան ճայաստան:

Եվ ահա նրանք ճայաստանում են: Բարձրագույն ուսումնական հաստատությունները լայնորեն բացել են իրենց դռները, որպեսզի իրենց գրկում իրականացնեն նրանց երազները, որոնք հավիտյան անկատար կմնային, եթե Մովսեսական կառավարությունը, հայ ժողովուրդի մեծ բարեկամ Ստալինը հայրական ձեռքով չկանչեր և տունը չբերեր օտար ու ցուրտ երկրների տակ թափահար թափահար հայ պանդուխտներին:

Վ. ԴԱՎԻԹԱՆ